ՎԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ

# ՄԵԿ ԷՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ. ՏԻԳՐԱՆ ԴԵՎՈՅԱՆՑ (1918-1920 թթ.)

Հայաստանի Առաջին Հանրապետության հետախուզական ծառայության պատմության մեջ իր ուշագրավ կենսագրաէջն ունի Տիգրան Դեվոյանցը[1], որն այդ համակարգի կարևոր դեմքերից էր, նրա ոչ ստանդարտ, հակասական կերպարներից և ռեալ ղեկավարներից մեկը, հայ սպա, որը եղել էր Կովկասյան բանակի սպայակույտի հակահետախուզական բաժնի ղեկավարակազմում:[2]

Այն բանից հետո, երբ զինվորական նախարարի 1919թ. ապրիլի 14-ի հրամանի համաձայն ՀՀ զինվորական նախարարության Գլխավոր շտաբում ստեղծվեց Հետախուզական բաժանմունքը[3]. 1919թ. ապրիլից մինչև հունիսի վերջը Տիգրան Դեվոյանցը աշխատեց որպես այդ հետախուզական բաժնի պետ, լինելով քաղաքական համոզմունքներով ՀՅԴ անդամ (վերջինս ծնվել է Երևանում, իր իսկ վկայությամբ՝ Դրոյի դասընկերն է եղել, միասին ընդունվել են Երևանի Գիմնազիայի նախապատրաստական դասարանը[4]):

Իսկ նրա հարուստ հետախուզական կենսագրության սկիզբը դրվեց դեռևս առաջին աշխարհամարտի տարիներին: Անդրկովկասյան հանրապետությունների անկախության դժվարին գործընթացներից հետո (1918թ. երկրորդ կես), ինչպես պատմում է ինքը՝ Տ.Դեվոյանցը իր արժանահիշատակ հուշագրությունում, Վրաստանի հանրապետության տարածքով գնացքով իր անցման ժամանակ, Սամտրեդիա կայարանում, անակնկալ ձերբակալվում է վրաց միլիցիայի և հատուկ ծառայությունների աշխատակիցների կողմից վրացական բանակի մատակարարման ճյուղի պետի մատնության պատճառով, որին ժամանակին Տ.Դեվոյանցը, հատուկ հրամանի համաձայն, որպես տաճկական լրտեսի մի շարք այլ անձանց հետ միասին ձերբակալել էր Երզնկայի և Էրզրումի մեջ:

Դեպի բանտ փոխադրման ժամանակ, ինչպես այդ մասին վկայակոչում է Տ. Դեվոյանցը իր հուշերում, ինքն այդ ընթացքում հասցնում է ոչնչացնել իր

---

[1] Երևանի ռուսական գիմնազիայի նախկին սան, «Բորեաս» մարտական խմբի նախկին անդամ, 1917-1918թթ. Երզնկայի ճակատում տեղաբաշխված գեներալ Կալիտինի գլխավորած 2-րդ կորպուսի հետախուզական բաժնի աշխատակից և այլն.- տե՛ս՝ Հ.Գևորգյան. Սեբաստացի Մուրադ.- Երևան, «Հրազդան», 2003, էջ 224:

[2] Տե՛ս R.G.Hovannissian. The republic of Armenia, vol.II, From Versailles to London, 1919-1920, Berkeley. Los Angeles. Univ. of California Press, 1982, pp. 68, 177, 489:

[3] Տես՝ Հայաստանի Ազգային Սոխով (այսուհետև՝ ՀԱԱ) , Ֆ.Պ- 204, ց.1, գ.132, թ. 52-54:

[4] Տե՛ս՝ Տիգրան Դեվոյանց. Հետախույզի մը յուշերը (Պատասխան իմ քննադատներուն), «ՎԷՄ», 1938, յունար- մայիս, թիւ 2, էջ 49: Նույնի՝ Դրաստամատ Կանայան (Դրօ), Հայրենիք.-Բոստոն, N 9 (379), սեպտեմբեր, էջ 11:

պայուսակում գտնվող մի շարք կարևոր ծածկագրված թղթեր, որոնք կարող էին էլ ավելի ծանրացնել վիճակը, և դիվանագիտական բարդությունների առաջ կանգնեցնել ՀՀ ռազմաքաղաքական ղեկավար շրջաններին: Տ.Դեվոյանցի ձերբակալության օրը «վրաց հեռագրական գործակալությունը բաց էր թողել մի հեռագիր, որով հաղորդվում էր թե կապիտան Տիգրան Դեւոյեանցը, կովկասեան բանակի սպայակոյտի հակահետախուզական բաժանմունքի նախկին պետը ձերբակալուել է Սամտրեդի կայարանի մէջ, մեղադրուում է լրտեսութեան մէջ եւ պէտք է յանձնուի զինուրական դատարանի»:[5] Տ. Դեվոյանցի հետ տեղի ունեցածի մասին շուտով տեղեկացվում է նաև Թիֆլիսում գտնվող Հայաստանի դիվանագիտական հավատարմատար Լևոն Եվանգուլյանը, որը Տ.Դեվոյանցի Օրթաչալայի մոտ գտնվող բանտը տեղափոխելուց հետո ջանքեր է գործադրում, որ ոչ միայն ծանր վիճակում գտնվող, տիֆով հիվանդին այցելեն հայ բժիշկներ, այլև այդ մասին անհապաղ տեղեկացնում է Հայաստանի իշխանություններին, զինվորական ու արտաքին գործերի նախարարներին, ինչպես նաև Դեվոյանցի հարազատներին ու մտերիմներին, որոնք տենդագին քայլերի են դիմում՝ բանտից անհապաղ ազատելու վերջինիս և տեղափոխելու Հայաստան:[6] Այսպես, Զինվորական նախարարին հասցեագրված Հայկական դիվիզիայի պետ, գեներալ-մայոր Մ. Սիլիկյանի 1919թ. մարտի 1-ի զեկուցագրում նշում է, որ իրենց ունեցած տեղեկությունների համաձայն Թիֆլիսում վրացական հակահետախուզության կողմից ձերբակալվել է Տ.Դեվոյանցը՝ կարևոր փաստաթղթերով հանդերձ, հանձնվել է դատի և դատապարտվել գնդակահարության: Միաժամանակ Սիլիկյանը հայտնում էր, որ այդ կապակցությամբ անգլիացիները բողոքել են դատարանի որոշման դեմ (ըստ երևույթին, Դեվոյանցը առնչություններ ուներ անգլիական ռազմահետախուզական ծառայությունների հետ կամ էլ գտնվում էր վերջիններիս հետաքրքրության ոլորտում): Սիլիկյանը ենթադրում էր, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել Դեվոյանցի վիճակը թեթևացնելու համար:[7] Նշված զեկուցագրի վրա մարտի 5-ին զինվորական նախարար գեներալ-մայոր Հ. Հախվերդյանը և շտաբի պետ Մ. Զինկևիչը մակագրություն են արել՝ հասցեագրված արտաքին գործերի նախարարին, որում խնդրվում էր հարաբերություններ հաստատել անգլիացիների հետ,[8] տվյալ խնդրին լուծում գտնելու նպատակով: Արդեն 1919թ. մարտի 7-ին ՀՀ արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանը Վրաստանի արտաքին գործերի նախարար Ե.Գեգեչկորուն ուղղված հեռագրում, հայտնելով, որ Թիֆլիսում ձերբակալվել է հայկական զորամասի ծառայող Տ.Դեվոյանցը, տրվել է դատի և դատա-

---

[5] Տե՛ս Տիգրան Դեւեանց. Կեանքիս դրուագներից. Հայրենիք (Բոստոն), 1945, № 1 (246). Յունվար-փետրվար, էջ 54:
[6] Նույն տեղում:
[7] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ- 200, ց.1, գ.1, թ. 64: Տե՛ս նաև Տիգրան Դեւեանց. Կեանքիս դրուագներից.Հայրենիք (Բոստոն), 1945, № 1 (246), յունվար- փետրվար, էջ 54:
[8] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ- 200, ց.1, գ.1, թ. 64 :

պարտվել գնդակահարության, ու պահվում է բանտում, խնդրում էր կասեցնել դատավճիռը, հայտնելով, որ փոստով կուղարկվի նաև մանրամասն նամակ[9]: Սակայն ինչպես երևում է արխիվային մի շարք այլ փաստաթղթերից, վրացիները մտադիր չէին հեշտությամբ ընդառաջ գնալու հայկական կողմին, և ավելորդ քաշքշուկներ էին ստեղծում: Այսպես, ՀՅ արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանին հասցեագրված 1919թ. մարտի 25-ի հեռագրում Վրաստանի արտաքին գործերի նախարարի օգնական Կ. Սաբախտարիշվիլին հայտնում էր, որ Դեվոյանցը մեղադրվում է ռազմական լրտեսության մեջ, որ հետաքննությունը չի ավարտվել, և մոտ ապագայում գործը պետք է լսվի դատարանի նիստում[10]: Սակայն, վերջ ի վերջո, ինչպես պարզվում է հենց իր իսկ Տ. Դեվոյանցի հուշերից, նա փախչում է Թիֆլիսի Սետեխի բանտից[11]:

Հայաստանի Առաջին Հանրապետության համար ստեղծված բարդ իրադրությունում (սով, տնտեսական փլուզում, հազարավոր գաղթականներ, շրջափակում, ադրբեջանա-թուրքական արշավանքների մշտապես կրկնվելու վտանգ և այլն) էլ հայկական հետախուզական ծառայությունը փորձում էր ոչ միայն սեփական ոտքերի վրա կանգնել, այլև հնարավորինս արդյունավետ հակազդել ադրբեջանա-թուրքական, վրացական և այլ մեքենայություններին Հայաստանի Հանրապետության նկատմամբ, որոշակի պատկերացումներ կազմելով վերջիններիս զորքերի թվաքանակի, տեղաբաշխման, զինվածության և այլնի մասին, ինչպես նաև ծեռնարկելով որոշ հակամիջոցներ հակառակորդի Հայաստանի Հանրապետության դեմ ուղղված սադրանքները կանխելու և խարդախությունները մերկացնելու ուղղությամբ: Այսպես, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին ուղղված 1919թ. մայիսի 24-ի գաղտնի գրությամբ Գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար Ալ. Շնեուրը և հետախուզական բաժնի պետի պաշտոնակատար Հովհան Խան-Կոտուրսկին հայտնում էին, որ Գլխավոր շտաբի կողմից շտապ էրզրում, Մուշ, Վան և Թուրքահայաստանի մյուս քաղաքներն է գործուղվել շտաբս-կապիտան Դեվոյանցը (Զինվորական գերատեսչության գծով 1919 թ. հուլիսի 18-ի հրամանով, որն ստորագրել էին կառավարության նախագահ Ալ. Խատիսյանը և զինվորական նախարար գեներալ-մայոր Արարատյանը «զինվորական նախարարության Գլխավոր շտաբի բաժնի պետ օգնական շտաբս-կապիտան Տիգրան Դեվոյանցը ստանում է կապիտանի կոչում»[12]): Գրության մեջ ասվում էր, որ միաժամանակ նրա կողմից կարող են կատարվել արտաքին գործերի նախարարության կողմից առաջադրված խնդիրները, եթե այդպիսիք նրան

---

[9] Նույն տեղում, գ. 1, թ. 64, գ. 211, թ. 40:
[10] Նույն տեղում, գ.1, թ.111:
[11] Տե՛ս Դեւոեանց Տիգրան. Հետախոյզի մը Յուշերը, ՎԷՄ, 1938, Յունուար- Մայիս, թիւ 2, էջ 71:
[12] ՀԱԱ, Ֆ.Պ - 204, գ.1, գ.132, թ. 392, 394:

առաջիկայում կհանձնարարվեն: Խնդրվում էր այդ մասին առաջիկայում շտապ հաղորդել Գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքին:[13] Ուղևորության վերջնական նպատակը Կ.Պոլիս հասնելն էր, և այնտեղ հետախուզական գործի կազմակերպումը՝ հայթայթելով Հայաստանի համար անհրաժեշտ տեղեկատվությունը: Իր «Կեանքիս դրուագներից» հուշագրությունում Տ.Ղեվոյանցը պատմում է այդ մասին, տալիս որոշ մանրամասներ, որոնք, անշուշտ, միանշանակ չի կարելի ընդունել, անհրաժեշտ է որոշակի քննադատական մոտեցում ցուցաբերել դրանց նկատմամբ: Դրանում մասնավորապես Տ.Ղեվոյանցը գրում է. «Ես գնդապետ Շնծուրի (հարկ է ճշգրտել, որ Շնծուրը դա հանրահայտ Շնեուրի աղավաղված անունն է - Վ.Վ.) հետ պետք է ուղեւորուէի Պոլիս եւ Կիլիկիա որոշ զինուորական միսիայով:

Գնդ. Շնծուրը վերադարձավ Երեւան, իսկ ես մնացի Պոլիս: Կարճ ժամանակուայ մէջ կապ հաստատեցի Դաշնակից պետութեանց ինդելլիջենց սերվիսների հետ: Հայաստանի կողմից թէ ապրելու եւ թէ հետախուզական գործը վարելու համար ամսական ինձ տալիս էին ընդամենը 20լիրա: Յուսահատուած՝ առաջին շաբաթն իսկ ուզում էի հեռագրել Հայաստան, որ ինձ յետ կանչեն: Բայց այդ միջոցին ինձ այցելեց Դաշնակիցների հետախուզական բաժանմունքի մի ներկայացուցիչը ու առաջարկեց իրենց հաշուին կազմակերպել ամբողջ Արեւելքի հետախուզական գործը: Համաձայնուեցի մի պայմանով, որ իմ բոլոր ստացած տեղեկութիւնները ուղարկեմ նաեւ Հայաստան: Համաձայնուեցին»:[14] Կ. Պոլսում Տ.Ղեվոյանցը աշխատակցելով մի շարք հետախույզների, և մասնավորապես հետագայում Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» ամսագրի աշխատակից Հայկազն Ղազարյանի հետ, որը այդ ժամանակ անգլիական զինվորական ծառայության մեջ էր գտնվում, սկսում են միասին հայթայթել և զանազան եղանակներով Հայաստան ուղարկել արժեքավոր տեղեկատվություն Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունների ու տարածաշրջանային այլևայլ քաղաքական փոփոխությունների ու շրջադարձերի մասին. «Տեղեկատուության տեսակետով շատ արժէքաւոր էին Ե.Թ.-ի ամեն օր ինձ տուած լուրերը: Ամեն օր նա տալիս էր ինձ պատճէնները Թուրքիոյ բոլոր նախարարութիւնների գաղտնի նամակների, հրահանգների, հեռագիրների, ստացուած ու ուղարկուած: Այդ միջոցին սկսուել էր Միլլի շարժում, եւ Պոլսոյ Կենդրոնական կառավարութիւնը աչքակապուկ էր խաղում Դաշնակիցների հետ, հակառակ այն բանին, որ նա էլ ուժ էր տալիս գաղտնի կերպով այդ շարժումին»:[15] Առհասարակ, Տ.Ղեվոյանցը շատ մեծ կարևորություն էր տալիս տեղեկատվության օգտագործման ճիշտ կազմակերպմանը, և

---

[13] ՀԱԱ, Ֆ.Պ - 200, ց.1, գ.155, թ.10:

[14] Տիգրան Դէռոյեանց, Կեանքիս դրուագներից, Հայրենիք (Բոստոն),1945, № 1 (246), Յունվար-փետրվար, էջ 60-61:

[15] Նույն տեղում:

ամեն ջանք գործադրում էր, որ այն լինի նպատակային, կարողանա ծառայել հիմնական նպատակին, այն է՝ Հայաստանի Հանրապետության ազգային-պետական անվտանգության ամրապնդմանը: Այս առումով էլ նա շատ դիպուկ նկատում է. *«Կարեւոր լուրերի առաքումը միայն այն ժամանակ արժէք կունենայ, երբ այդ լուրերը լաւ կը դասաւորուին եւ օգտակար կը դարձնին նրանց, որոնք կազմում են պետութեան աչքերն ու ականջները»*:[16] 1919թ. դեկտեմբերի մոտերքը Տ.Դեվոյանցը ՀՀ զինվորական նախարարության դեկավարության պահանջագրով ետ է կանչվում իր կարևոր առաքելությունից Կ.Պոլսում: Հետաքրքիր է, որ Կ.Պոլսից մեկնելուց առաջ, ինչպես այդ մասին պատմում է իր հուշերում Տ.Դեվոյանցը, նրան Դաշնակից պետություններից մեկից դիմում են իրենց մոտ ծառայության անցնելու առաջարկով, որի հետ սակայն հայ հետախույզը չի համաձայնվում, նախընտրելով ծառայություն հայկական հետախուզական ծառայությունում, հավատարիմ մնալով իրեն հանձնարարված գործի և հայրենիքի գաղափարին. «Պոլսից մեկնելուց առաջ, մի Դաշնակից պետութեան պատասխանատու ներկայացուցիչը ինձ փորձեց համոզել, որ հրաժարուեմ իմ Հայաստանի պաշտօնից, մնամ իրենց մօտ շատ լաւ ամսականով՝ ամբողջ Արեւելքի հետախուզական գործը կազմակերպելու համար իրենց հաշուին: Առաջարկում էր 10,000 տոլար ամսական բիւճէ: Ես կտրուկ կերպով մերժեցի: Երեւանը, իմ հայրենիքս, ինձ կանչում էր, պէտք է մեկնէի»:[17] Տ.Դեվոյանցին դեպի Երևան իր ուղևորության հաջող ավարտի իրականացման հարցում օգտակար է լինում Բաթումի ֆրանսիական հյուպատոսը և Հայաստանի Հանրապետությունում գտնվող ֆրանսիական ռազմական ներկայացուցչության աշխատակից կապիտան Ա.Պուադեբարը, որը նաև հետախուզական բաժանմունքի վարիչ էր: Երևանում Տ.Դեվոյանցը ներկայանում է ընդհանուր սպայակույտի Հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի պետ կապիտան Վահագն Մուրադյանին:[18] Վ. Մուրադյանը նրան ուղարկում է Կարս՝ այնտեղի զորամասերի հետախուզությունը վարելու:

Դրա հետ մեկտեղ հարկ է ասել, որ Տ. Դեվոյանցը որպես պրպտող հետախույզ իր որոշակի սկզբունքային տեսակետն ուներ բազմաթիվ հարցերի մասին, աշխատելով ունենալ անկողմնակալ կարծիք նաև Հայաստանի Հանրապետության Անտանտյան դաշնակիցների վարքագծի վերաբերյալ, թեկուզ և անգամ գտնվելով նաև նրանց հետ հնարավոր և ինչ-որ տեղ էլ անխուսափելի համագործակցության պայմաններում: Ի դեպ, հարկ է ասել, որ Դաշնակիցների հնարավոր անտարբերության և ոչ հստակ, կողմնակալ վերաբերմունքին մասին Անտանտի գծով իրենց փոքր դաշնակցի՝ Հայաստանի նկատմամբ, և այդ առումով Թուրքիայի կողմից ձեռնարկվող ագրեսիվ գործո-

---

[16] Նույն տեղում:
[17] Նույն տեղում, 1945, № 2 (247), մարտ-ապրիլ, էջ 83:
[18] Նույն տեղում, 1947, № 2 (253), մարտ-ապրիլ, էջ 53, 61:

դությունների կապակցությամբ Տ. Դեվոյանցը ուշագրավ տեսակետ է արտահայտում. *«Թէեւ իրենց պահանջները առաջ քաշելու համար քէմալականները բաւականաչափ ուժն չունէին, բայց իրենց յոյսը դրած էին Դաշնակիցների անվճռական լինելու վրայ: Կ'ուզէին իրենց ունեցած ուժերով առ այժմ գրաւել Իզմիրը եւ Անդրկովկասի մասը մինչեւ Արփայայ, որովհետեւ կը խորհէին թէ այս անելու ժամանակը ամենանպաստաւորն էր: Այդ կերպով կարող էին իրենց ազգակիցների մէջ ստեղծել ոգեւորութիւն և վստահութիւն իրենց հետապնդած գաղափարների գործադրութեան համար: Միաժամանակ նրանք ուզում էին Փարիզի Խորհրդաժողովը դնել կատարուած իրողութեան առջեւ:*

*Հայ ժողովրդի հոգւոյն արդար պահանջները տաճիկների համար անընդունելի էին, եւ այդ պատճառով նրանք դիմում էին քայլերի՝ ընդմիշտ հաշուեյարդարի ենթարկելու համար Հայկական հարցը».*[19] Սակայն նա նաև ավելացնում էր, որ Ռուսաստանի վրա էլ չէին կարող հույս դնել, և այդ առումով շատ հետաքրքիր ձևով նկատում է. *«Տաճիկ-թաթար պատրաստութիւնների մասին Հայաստանի կառավարութիւնը իրազեկ էր պահում մեր արտասահմանի պատուիրակութիւնը, որը զուր ծեծում էր եվրոպական դիւանագետների դռները...Մեզ կարող էր փրկել միայն մեզ մօտ գտնուող ռուսը, եւ հայերից շատերը իրենց աչքերը յառել էին դէպի հիւսիս՝ Սովետների կողմը: Բայց նա հեռու էր մեզանից եւ զբաղուած իր ներքին քաղաքացիական կռիւներով, թեւ հետզհետէ մօտենում էր Անդրկովկասին».*[20]

Եվ դեռ ավելին, Տ.Դեվոյանցը իր «Կեանքիս դրուագներից» հուշաշարքում վերլուծության ենթարկելով իր ծեռքի տակ գտնվող այդ դժվարին տարիների բարդ աշխարհաքաղաքական իրադարձություններին վերաբերող հետաքրքրական մի շարք տեղեկագրեր, այլևայլ վավերագրեր, նույնիսկ պնդում է, որ *«Հայաստանի պատերազմական նախարարութիւնը եւ Փարիզի Հայաստանի պատուիրակութիւնը դեռ 1920թ. ապրիլին գիտէին տաճիկ-մեծամասնական յարձակումների մասին».*[21] Դրան Տ.Դեվոյանցը նաև խիստ բազմանշանակ ավելացնում է հետևյալը. «Հայաստանի հետախուզական բաժանմունքի ստացած գաղտնի զեկուցումների մէջ շատ անգամներ շեշտուում էր, որ Տաճկաստանի ազգային ուժերը Մուստաֆա Քէմալ փաշայի ղեկավարութեամբ շտապ վերակազմւում, կազմակերպւում են: Եւ, հակառակ Դաշնակիցների կտրուկ հրահանգներին, երիտասարդ թուրքեր հասան իրենց նպատակին, այն է՝ կազմեցին Ֆերիզ Ռիզա փաշայի նոր դահլիճը, բացառաբար իրենց կուսակիցներից, եւ այդպիսով «Միլլի Թաշկիլաթի» դրութիւնը դարձավ

---

[19] Տիգրան Դէռեանց. Կեանքիս Դրուագներից. Հայրենիք (Բոստոն), 1946 № 2 (253), մարտ-ապրիլ, էջ 104:
[20] Նույն տեղում, էջ105:
[21] Տիգրան Դէռեանց. Կեանքիս դրուագներից.Հայրենիք( Բոստոն),1947, № 2 (259), մարտ-ապրիլ, էջ107:

օրինական»:[22] Եվ վերջապես, փորձելով ամփոփել իր մտքերը, Տ.Դեվոյանցը հանգում է աքսիոմատիկ եզրակացության. *« Եվրոպական պետութիւններից ամէնեն շատ Անգլիան էր օգնում ռուսական ճերմակ բանակներին, ուստի սովետները որոշ շարժում առաջ բերին Անգլիոյ դէմ մահմեդական երկրների մէջ եւ հովանաւորեցին էնվեր եւ Նուրի փաշաներին ու նրանց նմաններին...: Իհարկէ, Սովետական Ռուսաստանի այս քայլը վնասում էր Հայաստանին, բայց նկատի ունեցէք, որ դիւանագիտութիւնը գութ չունի: Այստեղ պէտք է աւելացնեմ իմ համոզումը, որ Սովետական Ռուսաստանը թէեւ այդ շրջանին հովանաւորում էր Քեմալին, բայց «շան հետ բարեկամանալով՝ փայտը միշտ իր ձեռքին էր պահում ու հետեւում նրա բոլոր քայլերին:*

*Եւ այժմ մենք՝ հայերս, մնացել ենք մեն մենակ Դաշնակիցների թշնամիներով շրջապատուած, որոնք սպառնում են փոքրիկ Հայաստանի վերջին ծուխը մարել: Օգնութիւն ենք խնդրում Ֆրանսիայից, Անգլիայից, Ամերիկայից - բոլորն էլ խուլ են ձեւանում եւ իրար վրայ են նետում մեր գործը: Ապերախտ աշխարհ. մէկ տարի առաջ նրանք մեզ պէտք ունէին, քաջալերում էին մեր դիմադրութիւնը Բաքուի տակ, իսկ այժմ...Ի հաշիւ Հայաստանի Ազրբէջանը շարունակում էր ամէն միջոցներով միշտ իր սահմանները ընդարձակել, գրաւել զուտ հայաբնակ հողամասերը եւ այդ իր քայլերը ոչ միայն չէին կասեցնում մեր երեկուայ Դաշնակիցների կողմից, այլ երբեմն խրախուսում էին, որովհետեւ իրենց համար ձեռնտու էր տկարացնել Ռուսաստանը, ուժեղացնելով Ազրբէջանը».*[23]

Սակայն անգամ այդ իրավիճակում էլ հայկական հետախուզական ծառայությունը ի դեմս Տ.Դեվոյանցի՝ դեռ շարունակում էր պահպանել իր հենակետը Թուրքիայի սրտում՝ Կ.Պոլսում, որտեղից Հայաստան էր ուղարկվում կարևոր տեղեկատվություն տարբեր քաղաքական փոփոխությունների, քեմալական ուժերի ձեռնարկումների և Դաշնակիցների դիրքորոշման վայրիվերումների ու այլևայլ նրբերանգների մասին:[24] 1919-20 թթ. աշուն-ձմռան ժամանակահատվածը ընդգրկող Տ.Դեվոյանցի կողմից Կ.Պոլսից ուղարկված և արդեն նրա այնտեղից բացակայության ժամանակ ստացված հեռագրերի, զեկուցագրերի ու ամփոփագրերի ու դրանց նշանակության մասին ընդգծում է նաև Ռ. Հովհաննիսյանը:[25] Կարծում ենք, մեկնաբանությունները միանգամայն ավելորդ են և անտեղի, այստեղ են ասում՝ ասողին լսող է պետք, և այն էլ նման բարդ և վտանգալիցք իրավիճակում, երբ խաղաքարտի վրա էր դրված Հայաստանի Հանրապետության պետական անվտանգությունը, նրա ժողովրդի ֆիզիկական գոյության հարցը:

---

[22] Նույն տեղում, 1946, № 2 (253), էջ103:

[23] Նույն տեղում, 1945, № 2 (247), մարտ-ապրիլ, էջ 79, 1945, № 5 (250), սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 100:

[24] Տիգրան Դերեանց. Կեանքիս դրուագներից, Հայրենիք (Բոստոն), 1945, № 2 (247), մարտ-ապրիլ, էջ 85:

[25] Տես՝ R.G.Hovannissian.The republic of Armenia, vol.II, p. 68, 177-178, 489: